ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ
«ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ ՀՈԱԿ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ, 1
Հեռ. (+374.312) 2.22.29

«25» 08 2026թ.

Թիվ 063

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԱՐՈՆ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան

Ի լրումն 026 գրության հայտնում եմ, որ <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարանը Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հետ պատրաստում է հոբելյանական ցուցահանդես՝ նվիրված Նիկողայոս Տիգրանյանի 170–ամյակին: Մեր թանգարանի պահոցում է պահպանվում երգահանի հայատառ գրամեքենան, որը չափազանց վնասված վիճակում է և հատուկ վերականգնման կարիք է զգում: Նախապես խնդրել ենք տրամադրել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ երգահանի եզակի արժեք ներկայացնող հայատառ գրամեքենան Հայաստանի պատմության թանգարանում վերականգնելու նպատակով, սակայն այդ արժեքի մեջ չեն ներառվել հարկերը և տուրքերը: Ուստի խնդրում ենք հաշվի առնելով այս հանգամանքը թանգարանին տրամադրել 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ ներառյալ հարկերը և տուրքերը՝ գրամեքենան վերականգնելու համար:

Տնօրեն՝ *Ի. Ավագյան*

25.08.26
1521/9